

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 20 Մայիս 2018

Հոգեգալուստ / Թի՛ 59

SUNDAY, May 20, 2018
Pentecost / NO. 59

Today's Bible Readings

Bible John 14:25-31 / Acts 2:1-21 /
Պատարագի՛

ԱՐԺ. Տ. ՀԱՅԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ
Celebrant:

REV. FR. HAYARI TANASHIAN

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan,
Dn. Vahan Shakaryan,**

Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Murat Demirdogen

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆԵՍԻ 14:25-31

25 Այս բաները խօսեցայ ձեզի, քանի դեռ կը մնամ ձեր քով: **26** Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի դրկէ իմ անունովս, անհկա՛ պիտի սորվեցնէ ձեզի ամենը, եւ ինչ որ ըսի ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի: **27** Խաղաղութիւն կը թողում ձեզի, ի՛մ խաղաղութիւնս կու տամ ձեզի. ես չեմ տար ձեզի ա՛յնպէս՝ ինչպէս աշխարհը կու տայ: Ձեր սիրտը թող չվրդովի ու չերկնչի: **28** Լսեցիք թէ ըսի ձեզի. «Ես կ'երթամ, բայց դարձեալ պիտի գամ ձեզի»: Եթէ սիրէիք զիս, պիտի ուրախանայիք՝ որ ես կ'երթամ Հօրը քով, որովհետեւ իմ Հայրս ինձմէ մեծ է: **29** Եւ այժմէն՝ դեռ չեղած՝ ըսի ձեզի, որպէսզի երբ ըլլայ՝ հաւատարք: **30** Ա՛լ շատ պիտի չխօսիմ ձեզի հետ, որովհետեւ այս աշխարհի իշխանը կու գայ. բայց ո՛չ մէկ հեղինակութիւն ունի իմ վրաս: **31** Սակայն աշխարհը թող գիտնայ թէ ես կը սիրեմ Հայրը, եւ կ'ընեմ ա՛յնպէս՝ ինչպէս Հայրը պատուիրեց ինծի: Ոտքի՛ ելէք, երթա՛նք ասկէ»:

ԳՈՐԾԸ ԱՌԱՔԵԼՈՅ 2:1-21

1 Երբ Պենտեկոստէի տօնը հասաւ, բոլորն ալ միաբան՝ մէկ տեղ էին: **2** Յանկարծ շառաչ մը եղաւ երկինքէն՝ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս, ու լեցուց ամբողջ տունը՝ ուր նստած էին: **3** Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ, ու հանգչեցան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ: **4** Բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար: **5** Երուսաղէմ բնակող Հրեաներ կային, բարեպաշտ մարդիկ՝ երկինքի տակ եղած ամէն ազգէ: **6** Երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը համախմբուեցաւ ու շփոթեցաւ, որովհետեւ կը լսէին թէ անոնք կը խօսէին իրենցմէ իւրաքանչիւրին սեփական բարբառով: **7** Բոլորն ալ զմայլած էին եւ կը զարմանային՝ իրարու ըսելով. «Ահա՛ ասոնք բոլորն ալ՝ որ կը խօսին, միթէ Գալիլեացի չե՞ն: **8** Ուրեմն ի՞նչպէս կը լսենք՝ մեր իւրաքանչիւրին սեփական բարբառով, այն երկրին՝ որուն մէջ ծնած ենք. **9** Պարթեւներ, Մարեր ու Եղամացիներ,

եւ անոնք որ կը բնակին Միջագետքի, Հրեաստանի, Կապադովկիայի, Պոնտոսի, Ասիայի, **10**Փռիւզիայի, Պամփիլիայի ու Եգիպտոսի մէջ, եւ Կիւրենէի մօտ՝ Լիպիայի կողմերը, նաեւ Հռոմէն գաղթած Հրեաներ ու նորահաւատներ, **11**Կրետացիներ եւ Արաբներ, կը լսենք թէ անոնք կը խօսին Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին՝ մե՛ր լեզուներով»: **12**Բոլորն ալ զմայլած էին, ու տարակուսած՝ կ'ըսէին իրարու. «Ի՞նչ կրնայ ըլլալ ասիկա»: **13**Ոմանք ալ ծաղրելով կ'ըսէին. «Անոնք լի են անոյշ գինիով»: **14**Բայց Պետրոս կանգնեցաւ տասնմէկին հետ, բարձրացուց ձայնը եւ ըսաւ անոնց. «Ո՛վ Հրեաստանցիներ, ու դուք բոլորդ՝ որ կը բնակիք Երուսաղէմ, սա՛ գիտցէ՛ք եւ մտի՛կ ըրէ՛ք իմ խօսքերս. **15**որովհետեւ ասոնք ո՛չ թէ արբեցած են՝ ինչպէս դուք կ'ենթադրէք, քանի դեռ օրուան երրորդ ժամն՝ է, **16**հապա ասիկա ա՛յն է՝ որ ըսուեցաւ Յովէլ մարգարէին միջոցով.**17**“Վերջին օրերը,- կ'ըսէ Աստուած,- իմ Հոգիէս պիտի թափեմ ամէն մարմնի վրայ, եւ ձեր որդիներն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն, ու ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն: **18** Իմ ծառաներուս եւ աղախիններուս վրայ ալ այդ օրերը իմ Հոգիէս պիտի թափեմ, ու պիտի մարգարէանան: **19** Վերը՝ երկինքը՝ սքանչելիքներ ցոյց պիտի տամ, եւ վարը՝ երկիրը՝ նշաններ, արիւն, կրակ ու ծուխի մառախուղ. **20**արեւը պիտի փոխուի խաւարի, եւ լուսինը՝ արիւնի, դեռ Տէրոջ մեծ ու երեւելի օրը չեկած: **21**Եւ ո՛վ որ կանչէ Տէրոջ անունը՝ պիտի փրկուի”:

Bible John 14:25-31

25 These things have I spoken unto you, being yet present with you. **26** But the Comforter, which is the Holy Ghost, whom the Father will send in my name, he shall teach you all things, and bring all things to your remembrance, whatsoever I have said unto ou.**27** Peace I leave with you, my peace I give unto you: not as the world giveth, give I unto you. Let not your heart be troubled, neither let it be afraid. **28** Ye have heard how I said unto you, I go away, and come again unto you. If ye loved me, ye would rejoice, because I said, I go unto the Father: for my Father is greater than I. **29** And now I have told you before it come to pass, that, when it is come to pass, ye might believe. **30** Hereafter I will not talk much with you: for the prince of this world cometh, and hath nothing in me. **31** But that the world may

know that I love the Father; and as the Father gave me commandment, even so I do. Arise, let us go hence.

Acts 2.1-21

1 And when the day of Pentecost was fully come, they were all with one accord in one place. **2** And suddenly there came a sound from heaven as of a rushing mighty wind, and it filled all the house where they were sitting. **3** And there appeared unto them cloven tongues like as of fire, and it sat upon each of them. **4** And they were all filled with the Holy Ghost, and began to speak with other tongues, as the Spirit gave them utterance. **5** And there were dwelling at Jerusalem Jews, devout men, out of every nation under heaven. **6** Now when this was noised abroad, the multitude came together, and were confounded, because that every man heard them speak in his own language. **7** And they were all amazed and marvelled, saying one to another, Behold, are not all these which speak Galilaeans? **8** And how hear we every man in our own tongue, wherein we were born? **9** Parthians, and Medes, and Elamites, and the dwellers in Mesopotamia, and in Judaea, and Cappadocia, in Pontus, and Asia, **10** Phrygia, and Pamphylia, in Egypt, and in the parts of Libya about Cyrene, and strangers of Rome, Jews and proselytes, **11** Cretes and Arabians, we do hear them speak in our tongues the wonderful works of God. **12** And they were all amazed, and were in doubt, saying one to another, What meaneth this? **13** Others mocking said, these men are full of new wine. **14** But Peter, standing up with the eleven, lifted up his voice, and said unto them, Ye men of Judaea, and all ye that dwell at Jerusalem, be this known unto you, and hearken to my words: **15** For these are not drunken, as ye suppose, seeing it is but the third hour of the day. **16** But this is that which was spoken by the prophet Joel; **17** And it shall come to pass in the last days, saith God, I will pour out of my Spirit upon all flesh: and your sons and your daughters shall prophesy, and your young men shall see visions, and your old men shall dream dreams: **18** And on my servants and on my

handmaidens I will pour out in those days of my Spirit; and they shall prophesy:
¹⁹ And I will shew wonders in heaven above, and signs in the earth beneath; blood,
and fire, and vapour of smoke: ²⁰ The sun shall be turned into darkness, and the
moon into blood, before the great and notable day of the Lord come: ²¹ And it shall
come to pass, that whosoever shall call on the name of the Lord shall be saved.



SOLER

20 Մայիս 2018

Հոգեգալուստի Տոնը

Սուրբ Յարութեան յիսուներորդ օրը Հայ Առաքելական եկեղեցին կը տօնախմբէ Ս. Հոգիին Էջըը առաքեալներուն վրայ: Սուրբ Հոգին Սուրբ Երրորդութեան երեք անձերէն մէկն է, համագոյ եւ հաւասար Հօրը եւ Որդիին: Քրիստոս Իր երկրային կեանքի ընթացքին առաքեալներուն հետ խօսած էր Սուրբ Հոգիին գալստեան մասին. «Իսկ Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որուն Հայրը կ'ուղարկէ Իմ անունովս, Ան ձեզ ամէն բան կ'ուսուցանէ եւ ձեզ կը յիշեցնէ այն ամէնը, ինչ որ Ես ըսի ձեզի» (Յովհ. 14:26):



Սուրբ Հոգիին գալուստը նկարագրուած է «Գործք Առաքելոց»-ին մէջ «Երբ Պենտեկոստէի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եւ յանկարծակի երկինքէն հնչեց ձայն մը՝ սաստիկ հողմէն եկած ձայնի նման. Եւ լեցուց այդ տունը: Եւ երեւցան բաժնուած լեզուներ՝ բոցեղէն լեզուներու նման, որոնք նստեցան իւրաքանչիւրին վրայ: Եւ բոլորը լեցուեցան Սուրբ Հոգիով ու սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին անոնց խօսիլ տուած էր» (Գործք 2:1-4):

Աստուածաշնչեան այս հատուածին մէջ կը նշուի, որ տարբեր ազգերու ներկայացուցիչներ, որոնք ներկայ էին, զարմացան՝ իւրաքանչիւրը իր հարազատ լեզուն լսելով:

Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ շնորհքի վարդապետութիւնը կապուած է Սուրբ Հոգիին հետ: Ըստ այդ վարդապետութեան՝ իւրաքանչիւր առաքինութիւն աստուածային պարգեւ է, որ կը տրուի հաւատացեալին Սուրբ Հոգիէն, եւ որեւէ առաքինութեան վերագրումը սեփական անձին եւ ոչ թէ Աստուծոյ հպարտութեան տանող մեծ մեղք է: Հետեւաբար, Հոգեգալուստի յիշատակումը նաեւ կոչ է իւրաքանչիւր հաւատացեալի՝ հպարտութենէն խուսափելու եւ աստուածային շնորհքներով միայն բարի գործեր կատարելու: Երկուշաբթիէն կը սկսի եղիական պահքը: Հայ

Առաքելական եկեղեցւոյ սահմանած՝ տարուան չորս եղանակներու պահքերէն այս ամառնամուտի շաբաթապահքն է: Ինչպէս միւս եղանակներու պահքերը, Եղիական Պահքը եւս եկեղեցական որեւէ տօնի պատրաստութիւն չէ: Ըստ աւանդութեան՝ Եղիական կը կոչուի միայն այն պատճառով, որ կը նախորդէ շաբաթապահքի յաջորդ Կիրակիին՝ Ս. Եղիա Մարգարէի Յիշատակութեան Տօնին: Ամառուայ պահքը կը սկսի Յոգեգալստեան Կիրակիի յաջորդ օրը (պահքի բարեկենդանը Յոգեգալստեան Կիրակին է): Չատիկի օրուան փոփոխման հետ պահքի սկիզբը կրնայ փոփոխուիլ Մայիսի 11-էն մինչեւ Յունիսի 14-ը ինկած ժամանակահատուածին մէջ: Միւս եղանակներու պահքերուն նման, այս պահքը եւս կը տեւէ 5 օր՝ երկուշաբթիէն մինչեւ Ուրբաթ:

Յայ եկեղեցւոյ մէջ Յոգեգալստեան տօնը ունի 35 օրուայ շարժականութիւն, ուստի կը կատարուի Մայիսի 10-էն Յունիսի 13-ը ձգուող ժամանակամիջոցին համապատասխան Կիրակի օրը:

Սուրբ Յոգիի գալստեամբ Քրիստոսի եկեղեցին աւելի ընդարձակուեցաւ եւ ընդունուեցաւ աշխարհի եւ ազգերու կողմէ: Այս տօնով Յայ եկեղեցւոյ մէջ կ'աւարտի Յինանց շրջանը:



ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ
Կիրակի, 20 Մայիս 2018

*Յոգեգալստեան Տօնին առիթով շնորհաւորութիւն բոլոր
ԳԱԼՈՒՄՏ, ՄԽԻԹԱՐ, ԱՂԱԲՆԻ եւ ՍԻՐԱՐՓԻ
անունները կրողներուն:*

NAME DAY CELEBRATION
Sunday May 20, 2018
On the Feast of Pentecost
Congratulations to all
KALOUST, MKHITAR, AGHAVNI & SIRAPI

Եղիական Պահք

Հայ Եկեղեցւոյ կողմէ սահմանուած չորս եղանակի պահքերէն ամառնամուտի շաբաթապահքն է: Այս շաբաթապահքը, ինչպէս միւս եղանակի պահքերը, եկեղեցական որեւէ տօնի պատրաստութիւն չէ, իսկ ականդաբար կը կոչուի Եղիական միայն այն պատճառով, որ կը նախորդէ շաբաթապահքի յաջորդ Կիրակին հանդիպող Եղիա մարգարէի յիշատակութեան տօնին:



Ամառոյ այս պահքը կը սկսի Հոգեգալստյան Կիրակիին յաջորդ օրը (պահքի բարեկենդանը՝ Հոգեգալստյան Կիրակի): Չատիկի օրուան փոփոխման հետ պահքի սկիզբը կրնայ փոփոխուիլ Մայիսի 11-էն մինչեւ Յունիսի 14-ը: Ինչպէս միւս եղանակներու պահքերը, այս պահքը եւս կը տեւէ 5 օր՝ Երկուշաբթին մինչեւ ուրբաթ:

ՌԻՆՏԻ ՕՐ ՍԵՒԱՆԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻ (ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ ՏՕՆ)

Ն.Օ.Ս.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ 2010 թուականէն ի վեր Հոգեգալստեան տօնը հռչակուած է Սեւանի Ս. Առաքելոց Վանքի ուխտի օր: Այդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն Սեւանավանք կը բերուին Ս. Առաքելոց մասունքները ու հաւատացեալները հնարաւորութիւն կ'ունենան ստանալու մասունքներէն ճառագայթող օրհնութիւնը: Առաքեալներու սրբազան մասունքները հոն կը մնան մինչեւ երեկոյ: Տօնին առիթով կը մատուցուի Սուրբ Պատարագ, որմէ ետք սրբազան մասունքներով կը կատարուի օրհնութիւն եւ Անդաստանի կարգ:



Սեւանայ վանքը կը գտնուի Սեւանայ կղզիին մէջ (այժմ՝ թերակղզի): Գրիգոր Լուսաւորչի կարգադրութեամբ հոս հիմնուած են Ս. Յարութիւն եկեղեցին, ապա Ս. Յովհաննէս Մատուռը՝ ի պատիւ Տրդատ թագաւորի, որ աւանդութեան համաձայն մկրտուելէն ետք ստացած էր Յովհաննէս անունը: Մաշտոց վարդապետ Եղիվարդեցիի (հետագային Ամենայն Յայոց Կաթողիկոս) տեսիլքով եւ Աշոտ Ա. Բագրատունիի դուստր, Սիւնեաց Վասակ Գաբուռն իշխանի այրիին՝ Մարիամի հովանաւորութեամբ 874 թ. կը կառուցուի Առաքելոց եւ Ս. Աստուածածնայ եկեղեցիները:

Հին ժամանակ երեք անգամ Սեւանավանք ուխտի երթալը հաւասար էր Երուսաղէմ ուխտի երթալուն: Իսկ Սեւանավանքի եւ հոն պահուող սրբութիւններուն համբաւը շատ մեծ էր:

PILGRIMAGE DAY SEVANAVANK (FEAST OF THE PENTECOST)

Since 2010, by the blessing of Karekin II Catholicos of all Armenians, the Feast of Pentecost was proclaimed as the pilgrimage day to the monastic complex of Sevanavank. On the Sunday of Pentecost, the holy relics of apostles are brought to Sevanavank from Echmiadzin and kept there the whole day, for the faithful to have the opportunity to receive the blessings radiating from them.



The complex is located on Sevan Peninsula (used to be an island) in the north Province of Armenia. According to tradition, by the order of St. Gregory the Illuminator the church of Holy Resurrection and the chapel of St. John were founded here. The chapel of St John was built in honour of king Tirdat, as his baptismal name of was John.


In 874, based on the vision of Archimandrite Mashtots Yeghivardetsi (later Catholicos of All Armenians) and with the support of Mariam Syouni, the daughter of Ashot A. Bagratuni and the widow of noble Vasak Gabourn Syouni, the churches of Holy Apostles and St. Mary were built. In old times, three pilgrimages to Sevanavank were considered equal to going on a pilgrimage to Jerusalem. Sevanavank was also famous by its holy relics.

Holidays

2018-05-20

Feast of Pentecost

The Feast of Pentecost is the commemoration of the descent of the Holy Spirit upon the Apostles on the fiftieth day following the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ. The Armenian Church celebrates this feast 50 days following Easter Sunday.



The Holy Spirit is one of the three persons in the Holy Trinity coexisting with, and equal to, the Holy Father and the Holy Son. During His earthly life and ministry Christ spoke to the Apostles about the coming of the Holy Spirit. Recording the words of Christ, St. John writes, “The Comforter, the Holy Spirit, whom the Father will send in my name, will teach you everything and make you remember all that I have told you.” (John 14:26).

The descent of the Holy Spirit is described in the Acts of the Apostles: “When the day of the Pentecost came, all the believers were gathered together in one place. Suddenly there was a noise from the sky which sounded like a strong wind blowing, and it filled the whole house where they were sitting. Then they saw what looked like tongues of fire which spread out and touched each person there. They were all filled with the Holy Spirit and began to talk in other languages, as the Spirit enabled them to speak. (Acts 2:1-4).

In the book of Acts, St. Luke further records the names of various countries, and that men from those countries were surprised, when each of them heard his native language. Among the mentioned places are Mesopotamia, Judea and Cappadocia (Acts 2:9). Two of the saints of the Universal Church, both of Roman origin, Tertullian and Augustine, have written that the word “Armenia” should possibly be substituted instead of “Judea”, as it is more logical that Armenia would be mentioned among those as a “foreign” country, as the apostles were living in Judea.

Moreover, with regards to geographical position, Armenia was situated between Mesopotamia and Cappadocia. Therefore, the people living in Armenia may have been among the first witnesses of the gifts of the Holy Spirit.

Among the Armenian Church songs and hymns, two are dedicated to the Feast of Pentecost: “The Sent Dove” (referring to the Holy Spirit in the form of a dove that descended upon Christ during His Baptism) and “Indivisible Trinity”. These are sung during the Morning Service on the feast day. Also, during the Evening Service, the “Andastan” rite of the blessing of the four corners of the world is conducted. It is during this service that a prayer written by 12th century Armenian Church father Nerses of Lambron, is read.

In the Christian Church the teaching of divine grace is related to the Holy Spirit. According to that instruction, each virtue is a divine grace granted to the faithful by the Holy Spirit. Thus, ascribing any virtue to one’s own self, and not to God, is a grave sin and can be manifested in another, which is pride. Hence, commemoration of Pentecost is also an appeal to the faithful to avoid pride and instead, use the divine graces in life for righteous purposes and moral goals.

One of the four season fasting periods defined by the Armenian Apostolic Church is the fasting period preceding the beginning of summer. This fasting period, as well as the other ones preceding the other seasons of the year, is not preparation for any feast, and according to the tradition is called Elijah’s fast, as coincides the feast of commemoration the Prophet Elijah the next Sunday.


This fasting period preceding the beginning of summer starts the day following the feast of Pentecost (the flesh day preceding the fast is the Sunday, when the feast of Pentecost is celebrated). With the change of the Easter Feast day the beginning of the fasting period may be during the period May 11-June 14. Like the other fasting periods preceding the other seasons of the year, this one also lasts five days - from Monday till Friday.



Ի՞նչ է Հրաշքը

Երբեմն մարդիկ հարց կու տան. ի՞նչ է հրաշքը: Արդեօ՞ք այն կը նշանակէ, որ հրաշքի պահուն Աստուած կը խախտէ Իր իսկ օրէնքները, բնութեան օրինաչափութիւնը:

Ի հարկէ, ո՛չ: Հրաշքը այն է, երբ կը վերականգնուի մարդկային կեանքի, աշխարհի խախտուած ներդաշնակութիւնը: Հրաշքը չենթադրեր չլսուած, անբնական, իրերու բնոյթին հակառակ իրագործումը, այլ՝ ընդակառակը, հրաշքի որպէս արդիւնք Աստուած կը թափանցէ Իր արարչագործութեան մէջ եւ կը հաստատէ ներդաշնակութիւն: Երբ Աստուած կը յայտնուի մեզի եւ մենք կ'ընդունինք եւ կը հնազանդինք Տիրոջ կամքին, Ան կրնայ մեր կեանքին մէջ ազատ գործել: Այստեղէն կը ծնի հրաշքը:



Նման հրաշքի օրինակ կը տեսնենք Գալիլիայի Կանա քաղաքին մէջ տեղի ունեցած հարսանիքի ժամանակ (Յովհ. 2:1-11), երբ Աստուածամայրը դիմեց Քրիստոսին եւ ըսաւ. «Գինի չունին»: Մարդոց սիրտերը փափաք ունէին ուրախութեան, իսկ գինին սպառած էր: Քրիստոս անոր ըսաւ. «Ի՞նչ կ'ուզես ինձմէ, ով կին, իմ ժամանակը դեռ հասած չէ»: Իսկ Աստուածամայրը ուղղակիօրէն չպատասխանեց, այլ սպասաւորներուն ըսաւ. «Ինչ որ ձեզի ըսի, ըրէք»: Աստուածամայրը Քրիստոսի հարցին պատասխանեց կատարեալ հաւատքի դրսեւորմամբ: Ան անսահման կը հաւատար Որդիին իմաստութեան, Անոր սիրոյն, Անոր աստուածութեան: Ամէն մէկը, ով որ կ'ընէ այն, ինչ որ իրեն կ'ըսէ Քրիստոս, Աստուծոյ Արքայութիւնը կը բացուի եւ այն ինչ որ անհնար է, հնարաւոր կը դառնայ:

Եւ ահա այն անհրաժեշտ պայմանները, որոնք հնարաւոր կը դարձնեն հրաշքը, կեանքի ներդաշնակութիւնը: Ամենէն առաջ պետքէ կարիքը ըլլայ, իրական կարիք, պարտադիր չէ, որ ողբերգական առիթ ըլլայ, որպէսզի յիշենք Աստուծոյ, ուրախութեան մէջ եւս Աստուծոյ կարիքն ունինք:

Կարելոր է նաեւ՝ սեփական անգօրութեան գիտակցումը. քանի դեռ կը մտածենք, թէ կրնանք հոգեւոր կեանքի մէջ մենք եւս բան մը ընել, Աստուծոյ հնարաւորութիւն տուած չենք ըլլար գործելու:

Եւ վերջապէս՝ կարելոր է աստուածային կարեկցութիւնը. Քրիստոս գթասիրտ եւ ողորմած է: Ան ցաւի մէջ կ'ապրի, երբ կը տեսնէ մարդոց, որոնց կեանքը պետք է ըլլայ կատարեալ եւ լեցուն ուրախութեամբ, բայց կը տանջուին կարիքէն:

Եւ ահա, երբ կը հանդիպին կարիքին, անզօրութեան գիտակցումը եւ Աստուծոյ սէրը, իրական կը դառնայ հրաշքը:



I pray that out of his glorious riches he may strengthen you with power through his Spirit in your inner being, so that Christ may dwell in your hearts through faith. And I pray that you, being rooted and established in love.

Ephesians 3:16-17

About Miracle

A miracle is a divine operation that transcends what is normally perceived as natural law; it cannot be explained upon any natural basis.

The miracles recorded in the Bible fall into several categories. The following examples are illustrative, though certainly not exhaustive:

First, there are supernatural acts of creation. Certain creation activities were accomplished by the word of God (Hebrews 11:3); he merely spoke, and it was done (Psalm 33:9). Obviously, this type of divine action is not being duplicated today since the creation process of the material universe was concluded at the end of the initial week of earth's history (Genesis 2:1-2).

Second, there were miracles which involved a temporary and localized suspension of laws


regulating nature.

Jesus calmed a ferocious storm on the Sea of Galilee

(Matthew 8:23-27), and, on another occasion, he walked upon the waters of the lake (John 6:16-21).

Third, there were signs which involved the healing of man's physical body. The blind was made to see (John 9:1-7), and the lame to walk (Acts 3:1-10).

Fourth, there were signs demonstrating divine power over death. Lazarus, dead four days, was raised (John 11:43-44), and, of course, the resurrection of Christ is the very foundation of the Christian system (1 Corinthians 15:16-19).




Fifth, some of the wonders of the New Testament age had to do with the expulsion of demons that had entered into human bodies (Matthew 12:22ff). This was evidence of the fact that the Savior's power was superior to that of Satan.



Sixth, the exhibition of divine authority was seen in the manipulation of certain material things. Christ turned water into wine (John 2:1-11), and multiplied a lad's loaves and fishes, so that thousands were fed (John 6:1-14).

Seventh, miraculous power was demonstrated in both the plant and animal kingdoms. Balaam's donkey spoke with a man's voice (Numbers 22:28), and the Lord Jesus, in an object lesson relative to the impending destruction of Jerusalem, destroyed a fig tree with but a word from his mouth (Matthew 21:19). In this study, we will limit ourselves mostly to a consideration of miracles recorded in the New Testament record.



Jesus was able to heal bodies, diseases and even bring people back from the dead. The Lord had power over the physical universe. All that the Lord did in the physical realm was to help us learn who He was in the spiritual realm. Every one of these miracles had a physical result, but they can be used to teach us about a God in Heaven who wants to have a relationship with man. Through Jesus Christ, God revealed Himself to us.

We can put our faith and trust in the power of the Lord for our eternal lives as well as our temporal ones.



Օրուան Խորհուրդները



- Յաղթանակը կը տօնեն անոնք, որոնք, պատերազմի բովոյժ անցնելով, ողջ մնացած են: Մենք ալ ողջ կը մնանք հոգեւոր պատերազին մէջ եւ յաղթանակ կը տօնենք, եթէ հազնինք Աստուծոյ սպառազինութիւնը, եւ Անոր խօսքն ու սերը մեր զէնքերը ըլլան (տես Եփես. 6:11-17):
- Անձրեւի թարմութիւնը նոր շունչ կու տայ, եւ երկինքը դարձեալ կը պայծառանայ: Չղջման արցունքները կը թարմացնեն հոգին, եւ թեթեւցած սիրտը աւելի պայծառ կը դառնայ:
- Բարի խօսքը ձեթ է, բարի գործը՝ գինի: Եթէ այս ձեթն ու գինին շատ ըլլան մեր երկրին մէջ, այն մեզի համար կը դառնայ Աւետեաց Երկիր:
- Սարերն ու ձորերը խօսիլ չեն գիտեր, սակայն կարող են արձագանգել: Մի՞թէ մեր բանաւոր հոգին լուռ պիտի մնայ, մի՞թէ չպիտի արձագանգէ երկնինքէն եկած ձայնին՝ Աստուծոյ կանչին, որ կ'ըսէ. «Ոտքի ելլիր, վեր նայիր եւ տես քու Տիրոջդ՝ քու Փրկիչիդ, քանզի Ես կը տեսնեմ քեզի եւ կը կամենամ փրկել»:
- Լոյսը աչքի մխիթարութիւնն է, քանի որ կը տեսնենք աշխարհի գեղեցկութիւնն ու կը զգուշանանք երեւցող վտանգներէն: Արարիչ Աստուած նախ մխիթարութիւն ստեղծեր է, եւ ապա անոնց, որոնց կը ցանկանար մխիթարել:
- Մարդու բնութեան մէջ Աստուծոյ պատկերին առկայութիւնը վկայութիւնն է մարդու յաւիտենական արժէքին:
- Խաչը յոյսի եւ փրկութեան նշանն է. ամէն տեղ, ուր կ'երեւի Սուրբ Խաչը, մխիթարութիւնն է՝ հաւատացեալ հոգիներու բժշկութեան, յարութեան ու փրկութեան յոյսով:
- Հեռաւոր սարերը մօտիկ կը դառնան, եթէ Աստուծոյ օգնութեամբ միշտ յառաջ երթաս: Բարձրաբերձ գագաթները դիւրահաս կը դառնան, եթէ Աստուծոյ օգնութեամբ ձգտինք դէպի վեր:



**Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները
փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Ծիսական Խորհուրդ

**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Parish Council

ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of May 2018
have been received with great appreciation***



MOTHERS' DAY:

Mr. & Mrs. Hovsep Doramajian \$25

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE TAKUHI SIRINYAN

**Mr. & Mrs. Varoujan & Irma Kababciyan \$75,
Mr. Vahan Kazandjian, Mr. & Mrs. Garbis Kalemajian,
Mr. & Mrs. Bedros & Choughik Vartzbedian, Mr. Antranig Tatossian,
Mr. & Mrs. Vartan & Nora Karasseferian,
Mr. & Mrs. Raffi & Diana Tufenkjian,
Mr. & Mrs. Berj & Serpuhy Berberian, Mr. Stepan Egoyan \$20**

HOKEHANKISD:

THE LATE VARTOUHIE

TORIKIAN-KASSARDJIAN

Mr. & Mrs. Hratch & Ani Torikian \$200, Mrs. Nadine Gharibian \$50

THE LATE ALBERT GHARIBIAN

**Mr. & Mrs. Norair & Edita Gharibian, Mrs. Nadine Gharibian,
Mr. & Mrs. Andre Bayard \$100, English Montreal School Board \$75**



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Չեռնարկ
Յունիս	3, Կիրակի	Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի Ելն ի Կիրապէն Եկեղեցւոյ Անուանակոչութիւն Մատաղօրհներ
	17, Կիրակի	Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի Մասունքները Գանատայի Մէջ Պատարագիչ եւ Քարոզիչ Արժ. Տ. Հրաչ Քհնյ. Մուրատեան Պուկարահայոց Հոգեւոր Հովիւ
Յուլիս	8, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Ջրօրհներ Վարդավառ
	9, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխումն Ս. Աստուածածնի» Խաղողօրհներ Աւարտին Ճաշկերոյթ Եկեղեցւոյ շրջափակին մէջ
	13, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
Սեպտեմբեր	16, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ

	17, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետության 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	Թուականը յաջորդիլ	«Առնիտա» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Եկեղեցւոյ Գմման եւ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Գրաւուած Օր

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի
Յիմնադրութեան 60 Ամեակի**

Յանդիսութիւն

10 Նոյեմբեր 2018, Շաբաթ երեկոյեան

Կը խնդրուի չխաչաձեւել:

Մանրամասնութիւնները յաջորդիւ:

**Շնորհակալութիւն
Ծխական Խորհուրդ**



Յայտարարուժիլ

Միքելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծխական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծխական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծխական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել


Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝
Ծխական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 20 Մայիս 2018

Տ. եւ Տիկ. Գառնիկ եւ Անահիտ Եագուպեանի,
Տ. եւ Տիկ. Արամ եւ Պելինտա Եագուպեանի,
Տ. եւ Տիկ. Մարգ եւ Գարին Կիրակոսեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ եղբօր եւ հարազատին՝

ԵՐՈՒԱՆԴ ԶԱԹԱԼՊԱՇԵԱՆԻ

(YERVANT TCHATALBACHIAN)

Մահուան 40-ին առիթով



Տ. եւ Տիկ. Առաքել Զաքարեանի եւ զաւակներուն,
Տիկ. Սիլվա Զաքարեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Սարգիս Զաքարեանի եւ զաւակներուն,
Պրն. Փօլ Զաքարեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Սեզար եւ Միրէյ Ալմուժապերի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ՓՕԼԻՆ

ԱՌԻԱՐԱԺԻ - ԶԱԲԱՐԵԱՆԻ

(PAULINE AWARAJI ZAKARIAN)

Մահուան 2-րդ տարելիցին առիթով



Տիկ. Սօսի Նազգաշեանի,
Տ. եւ Տիկ. Վահան Նազգաշեանի եւ ընտանիքին,
Տիար Շահէ Նազգաշեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆԻ

(HAIG NACCASHIAN)

մահուան 2-րդ տարելիցին առիթով





**Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian
Cathedral**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-12 years old children

Կիրակնօրեայ Վարժարանին նպատակն է Աստուծոյ խօսքն ու մեր Եկեղեցւոյ
աւանդոյթները մեր երեխաներուն մտքերուն եւ հոգիներուն մէջ սերմանել:

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ
երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց
Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ
Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝
Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066



**Sunday School aims to sow the word of God and
the traditions of our Armenian Church in our
children's minds and souls.**

**In a pleasant and friendly atmosphere, the
children will learn Psalms & songs, develop
Armenian language skills, & introduce to
Armenian history.**

Fun & fascinating consecutive Fieldtrips

**For more information and registration call to the
Church office (514) 279-3066**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).



Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.

Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.

Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège

Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.

La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):



Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորթները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Ղայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիական Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

**ԽՈԿՍԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ**

Արդեն իսկ տեղի կ'ունենան ամեն

Յինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:**

**Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն ընթացքին
միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ Գիրքը, Եկեղեցւոյ
հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն ու մասնակցութիւնը
եկեղեցւոյ կեանքին մէջ եւ վերջապէս պատասխան գտնել մեզ
յուզող հարցումներուն ու մտահոգութիւններուն:**

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Յայարի Բիւյ. Թանաշեան

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



SOL



ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻՆ ՄԵՐՈՅ
ԵԼԱՆԵԼՈՅՆ Ի ՎԻՐԱԴԵՆ
ԵՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ
ԵԿԵՂԵՑԻՈՅՍ

FEAST OF ST-GREGORY THE ILLUMINATOR
DELIVERANCE FROM THE PIT AND THE CHURCH NAME DAY

ՈՒՆՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ DIVINE LITURGY

Կիրակի, 3 Յունիս 2018
առաւօտեան ժամը 10:30-ին

Sunday, June 3, 2018 at 10:30 am

Պատարագիչ՝ Celebrant

ԱՐԺ. Տ. ՀԱՅԱՐԻ ԸՋՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ
REV. FR. HAYARI TANASHIAN

Ս. Սեղանին պիտի սպասարկեն Բրշ. Սարկաւազները: Պատարագի
երգեցողութիւնը պիտի կատարէ

«Կոմիտաս» Դպրաց Դասը:

Ղեկավար՝ Մուրատ Տէմիրտօլլէն / Choirmaster: Murat Demirdogen

Երգեհոնահար՝ Կարէն Մանուչարեան / Organist: Karen Manucharyan

Յաւարտ Ս. Պատարագի «Մարի Մանուկեան» սրահին մէջ տեղի
պիտի ունենայ ճաշկերոյթ,

Մատաղ-Գառնուկի սպասարկութիւն՝

Եկեղեցւոյս Ծխական Խորհուրդին կողմէ:

After the Divine Liturgy "Lamb-Madagh" will be served in

"Marie Manoogian" hall by Parish Council.

Մուտքը՝ ազատ / Free Entrance

ՍՈՒՐԲ ՀԱԿՈՒ ՄԾԲԵԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՄԱՍՈՒՆԲՆԵՐԸ ԳԱՆԱՏԱՅՈՒՄ
SAINT JACOB OF MTSBIN
HOLY RELICS IN CANADA

ՀԱՆԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Պիտի պատարագի և քարոզի
Արժ. Տ. Հրաչ Բինյ. Մուրադեան
Պլովդիպի Հոգևոր Հովիտ (Պուլկարիա)

DIVINE LITURGY

Celebrant and homilist
Rev. Fr. Hrach Muradyan
Parish Priest of St. George
Armenian Apostolic
Church of Plovdiv
Bulgaria

ՄՈՆԹՐԵԱԼ

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Հայաստանեայց
Առաքելական
Առաջնորդամիաստ եկեղեցի
Յունիս 17, ժամը 10:30-ին

ԹՈՐՈՆՏՈ

Ս. Երրորդության
Հայաստանեայց
Առաքելական եկեղեցի
Յունիս 24, ժամը 10:30-ին



MONTREAL

St. Gregory
the Illuminator
Armenian Cathedral
June 17,
at 10:30am

TORONTO

Holy Trinity
Armenian Apostolic
Church of Toronto
June 24,
at 10:30am

ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ

ARMENIAN DIOCESE
OF CANADA



DIOCÈSE ARMÉNIEN
DU CANADA

WWW.ARMENIANCHURCH.CA



ՌԻՍԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՕՆԵՅԷ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՐԱՔՏԻ 100 ԱՄԵԱԿԸ

PILGRIMAGE TO ARMENIA

CELEBRATE THE CENTENNIAL OF
THE BATTLE OF SARDARAPAT

22.05.2018



PÈLERINAGE EN ARMÉNIE

CÉLÉBREZ LE CENTENAIRE DE LA
BATAILLE DE SARDARAPAT

05.06.2018

25.05.2018

PROGRAM



ԾՐԱԳԻՐ



PROGRAMME

Tuesday, 22.05.2018	Departure from Canada.
Wednesday, 23.05.2018	Arrival at Zvartnots airport; Transfer to the Hotel; Matenadaran – Manuscript Depository; Lunch; Tsitsernakaberd - Genocide Museum; Yerevan city tour; Overnight in Yerevan.
Thursday, 24.05.2018	Oshakan; Tomb of St. Mesrop Mashtots; Ashtarak; Lunch; Ohanavank Monastery; Saghmosavank Monastery; Dinner; Overnight in Yerevan.
Friday, 25.05.2018	Geghard Monastery; Lunch; Garni Temple; Vernisazh; Overnight in Yerevan.
Saturday, 26.05.2018	Free Day; Overnight in Yerevan.
Sunday, 27.05.2018	Tsaghkadzor; Lunch; Sevan Monastery; Lake Sevan; Old Dilijan; Haghartzin Monastery; Overnight in Yerevan.
Monday, 28.05.2018	Zvartnotz Cathedral Site; St. Hripsimeh Church; Etchmiadzin Mother Cathedral and Museum; Lunch; Visit to Youth Cultural Center; Sardarapat; Overnight in Yerevan.
Tuesday, 29.05.2018	Khor Virap; Lunch; Noravank; Vayk, Goris; Dinner; Overnight in Artsakh.
Wednesday, 30.05.2018	Stepanakert; Gandzasar; Lunch; Shushi; Dinner; Overnight in Artsakh.
Thursday, 31.05.2018	Tatev Monastery; Lunch; Dinner in Yerevan; Overnight in Yerevan.
Friday, 01.06.2018	Free Day; Overnight in Yerevan.
Saturday, 02.06.2018	Megeryan Carpet; Lunch; Komitas Museum; Cultural Program; Armenian Cognac Factory; Overnight in Yerevan.
Sunday, 03.06.2018	Sanahin; Lunch; Haghpat Monastery; Dinner; Overnight in Yerevan.
Monday, 04.06.2018	Free Morning; Farewell Dinner; Overnight in Yerevan.
Tuesday, 05.06.2018	Transfer to the airport; Departure in the evening with the hope to return!

The cost of the program is \$US 1465 (double room) + ticket + travel insurance.

This price includes: 1) Hotel accommodation; 2) Meals as indicated in the above program (alcohol drinks not included); 3) Full comfortable local transportation service and soft drinks during all trips; 4) Transfer to/from tge Airport; 5) Professional guide service and entrance fees to the historical and cultural sites; 6) Insurance of the vehicle and passengers.




ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.